Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 1

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԽՈՐՀՈՒՐԴ) ՆԻՍՏԻ

Նիստն անցկացվել է ՆԳ նախարարությունում (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 130), 2026 թ. մարտի 10-ին, ժամը՝ 11.00-ից 12.27:

Նախագահել է՝ Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին Խորհրդի անդամներ

Հայկ Պետրոսյան	«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ
Անի Չատինյան	Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Ստյոպա Սաֆարյան	Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ
Մկրտիչ Ավետիսյան	«Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ
Արփի Հարությունյան	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ
Շուշանիկ Սահակյան	«Երիտասարդական գաղափարներ» երիտասարդական ՀԿ
Մարատ Ատովմյան	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ
Կարինե Դավթյան	«Կանանց իրավունքների տուն» ՀԿ
Սպարտակ Սարգսյան	«ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ
Լուսինե Հակոբյան	«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ

Մամիկոն Խուրշուդյան	«Եռամիասնություն հանուն զարգացման» ՀԿ
Բաբկեն Սեդրակյան	«Պատվավոր հյուպատոսների միություն» ՀԿ
Արման Անտոնյան	«Այլընտրանքային փոխադրամիջոցների զարգացման» և «Հեծանվորդների, սիրողական հեծանվասպորտի և սպորտային տուրիզմի միջազգային ֆեդերացիա» ՀԿ-ներ
Վլադիմիր Դաշյան	«Կյանքի աստղի միջազգային կոմիտե» միջազգային մարդասիրական ՀԿ
Վահրամ Հովեյան	«Բայազետ» կենտրոն ՀԿ
Անի Տերտերյան	R5 արտակարգ իրավիճակների և անվտանգության նախագծերի կառավարման կենտրոն
Ժորա Աբգարյան	«Տիգրան Աբգարյան» մարտական պատրաստության հայրենասիրական բարեգործական ՀԿ
Արա Ղարագյոզյան	«Փինք» իրավապաշտպան ՀԿ
Աննա Ավագյան	Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության Հայաստանյան մասնաճյուղի առանձնացված ստորաբաժանում ոչ առևտրային կազմակերպություն
Արսեն Իգիթյան	Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների արհմիության կազմակերպական աշխատանքների և արտաքին կապերի մասնագետ, ԵՄ-ՀՀ քաղհասարակության պլատֆորմի անդամ

Բացակայում էր՝

Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ

Ներքին գործերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին՝

Նարեկ Սարգսյան	ՆԳ նախարարի մամուլի քարտուղար, ՆԳՆ հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության պետ (ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդի համակարգող պաշտոնատար անձ)
Լիդա Վարդանյան	Հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության հանրային հաղորդակցության և մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ (ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդի պատասխանատու պաշտոնատար անձ)

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. 2025 թվականին ՀՀ ներքին գործերի նախարարության ռազմավարական միջոցառումների կատարման առաջընթացի ներկայացում
2. Հարց-պատասխան, քննարկում
3. Առաջիկա նիստի օրակարգի որոշարկում

ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը Խորհրդի կազմում ընդգրկվելու կապակցությամբ շնորհավորելով ներկաներին՝ ընդգծել է, որ նրանց փորձառությունը թույլ կտա համատեղ քննարկումների միջոցով նախանշել լուծումներ, որոնք կնպաստեն նախարարության որդեգրած քաղաքականության արդյունավետ իրականացմանը:

Մարդկային ռեսուրսների և կարողությունների զարգացում

Նախարար Սարգսյանը որպես առաջնահերթ և կարևոր ուղղություն առանձնացրել է կրթության ոլորտը՝ նշելով, որ անցած տարվա ընթացքում հաջողվել է ամբողջությամբ ձևավորել Ներքին գործերի նախարարության նոր կրթահամալիրը, որը համակարգի կադրերի պատրաստման և ընթացիկ վերապատրաստման համար պատասխանատու հիմնական կառույցն է: Նախարարն ընդգծել է, որ կրթահամալիրում իրականացվել են առանցքային փոփոխություններ. այն ձևավորվել է քաղաքացիական բարձրագույն ուսումնական հաստատության տրամաբանությամբ:

Արփինե Սարգսյանը նշել է, որ անցած տարվա ընթացքում ապահովվել է շուրջ 13 000 ծառայողների և աշխատակիցների մասնակցությամբ կրթական գործընթաց, ինչը համակարգի տեսանկյունից աննախադեպ ցուցանիշ է:

Հաջորդ կարևոր ուղղությունը մարդկային ռեսուրսների կառավարումն է: Արփինե Սարգսյանն ընդգծել է, որ վերապատրաստումները պետք է լինեն հստակ ինստիտուցիոնալ հիմքի վրա. համակարգի բոլոր ծառայողների համար ներդրվել է տարեկան կտրվածքով պարտադիր վերապատրաստման ծրագիր:

ՆԳՆ ոստիկանություն

Ոստիկանության ոլորտում 2025 թվականին իրականացվել են ծավալուն փոփոխություններ: Նախարարը նշել է, որ չորս հենասյունային ուղղություններն ունեն իրենց հստակ գործառույթները՝ ապահովելով համակարգի կառավարման արդյունավետությունը:

Արփինե Սարգսյանը նշել է, որ Ոստիկանության գվարդիան աշխատում է նոր տրամաբանությամբ՝ հետիոտն ծառայություն են իրականացնում նաև շրջիկ կարգախմբերը: Նախարարի խոսքով՝ շարունակվելու է ծառայության երթուղիների ընդլայնման քաղաքականությունը, և որքան մեծ ծածկողականություն կարողանա ապահովել Ոստիկանության գվարդիան, գործնականում ավելի շատ կանխարգելիչ աշխատանքներ կիրականացվեն:

Արդեն երկրորդ տարին անընդմեջ Պարեկային ծառայության գործունեության արդյունքում հաջողվել է էականորեն կրճատել ՃՏՊ-ների արդյունքում զոհերի թիվը: 2024 և 2025 թվականներին ՀՀ ավտոճանապարհներին խնայվել է 95 կյանք:

Քրեական ոստիկանության ուղղությամբ նախարար Սարգսյանը փաստել է, որ օպերատիվ աշխատանքի արդյունքում հայտնաբերվել է պետությանը և համայնքին պատճառված 25 մլրդ դրամի նյութական վնաս:

Նախարարը շեշտել է, որ հանցավորության տարբեր ուղղություններով դրական ազդակներ կան, բայց կան նաև անելիքներ: Նրա խոսքով՝ 2025 թվականին, 2024 թվականի համեմատությամբ, հանցավորությունը նվազել է 3,2%-ով, ինչը բացառապես իրավապահ համակարգի արդյունավետ աշխատանքի արդյունք է:

Անդրադառնալով հանցավորության կանխարգելման նոր ռազմավարության նախագծին՝ Արփինե Սարգսյանը կարևորել է Խորհրդի անդամների կողմից դիտարկումներ և առաջարկներ ներկայացնելը:

Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

Միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության շրջանակում Արփինե Սարգսյանը նշել է, որ նախորդ տարին նշանակալից էր՝ պայմանավորված Եվրոպական Միության կողմից վիզաների ազատականացման Գործողությունների ծրագրի փոխանցմամբ: Նա նշել է, որ Գործողությունների ծրագրում ներառված բոլոր միջոցառումները Հայաստանի Հանրապետության կառավարության բարեփոխումների օրակարգում են:

ՆԳ նախարարը խոսելով անձը հաստատող փաստաթղթերի կենսաչափական համակարգի ներդրման աշխատանքների մասին՝ նշել է, որ 2026 թվականի աշնանը համակարգն ամբողջովին ներդրված կլինի հանրապետությունում: 2027 թվականի հունվարի 1-ից կներդրվի նաև ամբողջովին նոր Բնակչության պետական ռեգիստր:

Փրկարար ծառայություն

Անդրադառնալով Փրկարար ծառայության ոլորտին՝ նախարար Սարգսյանը նշել է, որ 2025 թվականին ընդունվել է Ծառայության արդիականացման նոր հայեցակարգը, որի արդյունքում կձևավորվի արդյունավետ կառուցվածքային մոդել՝ միտված կառավարման արդյունավետության, արձագանքման արագության և ռեսուրսների նպատակային օգտագործման բարձրացմանը:

Ուշադրության կենտրոնում են նաև կամավորական ուժերի ներգրավումն ու հրշեջ-փրկարարական ջոկատների համալրվածությունը: 2025 թվականին Փրկարար ծառայությունը վերազինվել է նյութատեխնիկական միջոցներով:

ՆԳ նախարարին կից հասարակական խոհրդի անդամները ներկայացրել են հարցեր.

1. «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության փոխնախագահ Մարատ Ատովմյանը բարձր է գնահատել ՆԳ նախարարության կողմից իրականացվող բարեփոխումներն ու ձեռք բերված արդյունքները: Նա առաջարկել է ՆԳՆ կրթահամալիրում ծառայողների պատրաստման կրթական ծրագրում ներդնել առավել կիրառական առարկաներ և զարգացնել իրավապահ համակարգի ծառայողների հաղորդակցության մշակույթը:

Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանն արձագանքել է՝ նշելով ՆԳՆ կրթահամալիրում տեսական գիտելիքները սցենարների վրա հիմնված գործնական բաղադրիչի հետ համադրելու, հաղորդակցության կարողությունների զարգացման, վերապատրաստումների թեմատիկ ուղղությունների և դրանց վերաբերյալ ծառայողների ընկալումների մասին: Նախարարը պատրաստակամություն է հայտնել համատեղ

դիտարկելու ՆԳՆ կրթահամալիրի կրթական մոդուլները և ստանալ վերանայման առաջարկներ:

2. «Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպության հիմնադիր-նախագահ Բաբկեն Սեդրակյանն առաջարկել է հանցագործությունների կանխարգելման և բացահայտման գործընթացներում ներդնել քաղաքացիների համար խրախուսման մեխանիզմ:

Նախարար Սարգսյանը նշել է, որ հանցավորության կանխարգելման ռազմավարության նախագծի շրջանակում ՆԳ նախարարությունն անդրադառնալու է այդ թեմային: Նա նաև անդրադարձել է հանցագործությունների մասին անանուն հաղորդումների ներկայացման հարթակների ներդրման հնարավորությանը:

3. Խորհրդի նիստում «Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Մկրտիչ Ավետիսյանը ներկայացրել է որոշումների կայացման գործընթացում հասարակական Խորհրդի իրական ազդեցության և առաջարկների ներդրման, ոստիկանության ենթակա ծառայություններում ծառայողներին ամրակցված տեսանկարահանող սարքերի համալրվածության, բարեփոխումների արդյունավետության գնահատման չափանիշների վերաբերյալ հարցեր: Նա առաջարկել է նաև քննարկումներն անցկացնել ըստ ոլորտների՝ Ոստիկանության, Փրկարար ծառայության ու Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ուղղություններով:

Արփինե Սարգսյանը կիսվել է Խորհրդի հետ աշխատանքի վերաբերյալ սեփական ընկալումով՝ նշելով, որ խորհուրդը հերթական կարևոր հարթակն է, որի շրջանակում քննարկվելու է ՆԳՆ բարեփոխումների ընթացքը. մինչ այժմ ձևավորված բոլոր հարթակները՝ թե՛ նախորդ հասարակական խորհուրդը, թե՛ ՆԳ նախարարին կից երիտասարդական խորհուրդը հենց այդ տրամաբանությամբ են աշխատել, քննարկվել են կարևոր հարցեր, և դրանց արդյունքում նաև գործնականում կայացվել են որոշումներ:

Նախարարը խոսել է ծառայողներին ամրակցված տեսանկարահանող սարքերի ձեռք բերման, ոստիկանության ոլորտի բարեփոխումների գնահատման շերտերի, հանցագործությունների բացահայտումների մասին: Նա նշել է, որ Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) հետազոտության արդյունքներով՝ 2026 թվականի փետրվար ամսվա տվյալներով ոստիկանության նկատմամբ հանրության վստահությունն աճել է 55%-ից 61%:

4. «Եռամիասնություն հանուն զարգացման» հասարակական կազմակերպության նախագահ Մամիկոն Խուրշուդյանը հանդես է եկել ՆԳՆ կրթահամալիրում ծառայողների ընդունելության, ատեստավորման գործընթացներում ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդի անդամներին ներգրավելու, ինչպես նաև ընտրական գործընթացում Խորհրդի

անդամներին դիտորդի կարգավիճակ և անդամությունը հավաստող փաստաթուղթ տրամադրելու առաջարկներով:

Նախարար Սարգսյանը ողջունել է ՆԳՆ կրթահամալիրի հանձնաժողովների կազմում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավումը և նշել, որ այդ կապակցությամբ կրթահամալիրը մշտապես հանդես է գալիս հայտարարություններով: Նախարարը խոսել է Խորհրդի անդամների կարգավիճակի մասին, իսկ դիտորդի մասով նշել ընտրական օրենսգրքի տրամաբանությամբ այդ գործընթացում ներգրավելու մասին:

Մամիկոն Խուրշուդյանն առաջարկել է նաև ընտրություններին ընդառաջ ևս մեկ հանդիպում ունենալ, ինչի կապակցությամբ նախարարը նշել է, որ պատրաստ է քննարկել գործընթացի հետ կապված հարցերը:

5. «Այլընտրանքային փոխադրամիջոցների զարգացման» և «Հեծանվորդների, սիրողական հեծանվասպորտի և սպորտային տուրիզմի միջազգային ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունների հիմնադիր-նախագահ Արման Անտոնյանը նշել է, որ քաղաքի բեռնաթափման մասով ունի առաջարկներ, որոնք պատրաստ է ներկայացնել առաջիկա նիստերին:

Խոսելով սպանությունների թեմայից՝ նա անդրադարձել է պատժի խստացմանն ու մարդկանց ընկալումներին և պատրաստակամություն հայտնել ներկայացնելու իր ուսումնասիրությունը: Արման Անտոնյանն առաջարկել է օրակարգային դարձնել մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործությունների թեման, ինչի կապակցությամբ նախարարը նշել է, որ պատրաստ է քննարկումների:

Անդրադառնալով առողջությանը վնաս պատճառելու և սպանության դեպքերի խորքային պատճառների վերլուծությանը՝ Արփինե Սարգսյանն ընդգծել է հանցավոր վարքագծին նպաստող քրեական ենթամշակույթի նկատմամբ հանրային միասնական մերժողական վերաբերմունքի ձևավորման կարևորությունը:

Նախարարը միաժամանակ ընդգծել է, որ սպանությունների թվի էական աճ չի դիտվում, և դրանց մասնաբաժինն ընդհանուր հանցավորության մեջ կազմում է մոտ 0,2 տոկոս: Նրա խոսքով՝ թեև ցուցանիշները բավական ցածր են, իրավիճակը դեռևս մտահոգիչ է. պետք է հասկանալ՝ ինչպես լուծել խնդիրը հանցագործությունների կանխարգելման տրամաբանության մեջ: Նա խոսել է նաև հանցագործության մեղմացուցիչ հանգամանքների վերաբերյալ միջազգային փորձի ու մարդկանց ընկալումների մասին՝ ներկայացնելով կոնկրետ օրինակներ:

Անդրադառնալով ճանապարհները բեռնաթափելու հարցին՝ Արփինե Սարգսյանը նշել է, որ պատրաստ է այն քննարկել առաջիկա հանդիպմանը:

6. «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության նախագահ Լուսինե Հակոբյանն առաջարկել է արձանագրել ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդի նիստերը, սահմանել խոսքի տևողություն և հաջորդ հանդիպմանը քննարկել ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման Գործողությունների ծրագրի կատարման ընթացքը:

Նախարար Սարգսյանը նշել է, որ նիստը տեսաձայնագրվում է, և էլեկտրոնային տարբերակով արձանագրությունը կփոխանցվի Խորհրդի անդամներին: Վիզաների ազատականացման երկխոսության շրջանակում նախարարը նշել է, որ թեման կներառվի առաջիկա նիստի օրակարգում, նաև ընդգծել է, որ լուծումների նախանշման համատեքստում օգտակար կլինեն հասարակական կազմակերպությունների հետ քննարկումները:

ՆԳ նախարարի մամուլի քարտուղար, ՆԳՆ հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության պետ Նարեկ Սարգսյանը նշել է, որ Խորհրդի անդամները առաջարկները կարող են ուղարկել hasarakakan.khorhurd@mia.gov.am էլեկտրոնային փոստին:

7. «Կանանց իրավունքների տուն» հասարակական կազմակերպության նախագահ Կարինե Դավթյանն առաջարկել է շարունակական դարձնել հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ ընտանեկան բռնության թեմայով ծառայողների ոչ ֆորմալ վերապատրաստումները, Ոստիկանության աշխատանքը փոխակերպել արձագանքողից կանխարգելողի, վեր հանել դեպքերին արձագանքելու գործընթացում ծառայողների կարիքները, լավարկել իրավասությունների շրջանակը:

Նախարար Սարգսյանը նշել է, որ 2025 թվականին 1800 համայնքային ոստիկան անցել է հատուկ վերապատրաստում: Նա ընդգծել է, որ բարձրաձայնված խնդիրները մասամբ հասցեագրվել են, և գործընթացը շարունակվում է: Նախարարն առաջարկել է արձագանքողից կանխարգելող դառնալու մեխանիզմի մասով ավելի խորքային քննարկում անցկացնել:

8. Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի հիմնադիր և տնօրեն Ստյոպա Սաֆարյանը հետաքրքրվել է հանդիպումների հաճախականության, արտագնա նիստի կազմակերպման հնարավորության և օրակարգային թեմաների ընտրության մասին:

Արփինե Սարգսյանը նշել է, որ թեմայի բովանդակությամբ և քննարկման տևողությամբ պայմանավորված՝ հանդիպումները կարող են անցկացվել նաև արտագնա ձևաչափով: Նախարարը նշել է նաև, որ առաջիկա օրակարգի վերաբերյալ կկիսվեն գործընկերների հետ՝ հավելելով, որ թեև գործող կանոնակարգը նախատեսում է հերթական նիստի անցկացման ժամանակացույց, սակայն դրանք կարելի է ավելի հաճախ անցկացնել:

ՆԳ նախարարի մամուլի քարտուղար, ՆԳՆ հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության պետ Նարեկ Սարգսյանը նշել է, որ ժամանակացույցով նախատեսված հաջորդ նիստը հունիսի 10-ին է, սակայն հնարավոր է արտահերթ նիստ հրավիրել երկխոսության ձևաչափով:

9. Արձագանքելով «Տիգրան Աբգարյան» մարտական պատրաստության հայրենասիրական բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Ժորա Աբգարյանի կողմից Խորհրդի նիստի օրակարգում հարց ընդգրկելուն՝ ՆԳ նախարարի մամուլի քարտուղար, ՆԳՆ հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության պետ Նարեկ Սարգսյանը նշել է, որ առաջիկա նիստից՝ հունիսի 10-ից առնվազն 15 աշխատանքային օր առաջ Խորհրդի անդամը կարող է առաջարկություն ներկայացնել:

Նախարար Սարգսյանը նաև առաջարկել է Խորհրդի առաջիկա նիստը մինչ ԱԺ ընտրություններն անցկացնելու հնարավորությունը, քանի որ կարող են լինել թե՛ հաղորդակցությանը, թե՛ այլ ոլորտներին առնչվող հարցեր:

10. «Երիտասարդական գաղափարներ» երիտասարդական հասարակական կազմակերպության նախագահ Շուշանիկ Սահակյանն առաջարկել է նաև դիտարկել հանդիպումների անցկացման առցանց տարբերակը:

11. R5 արտակարգ իրավիճակների և անվտանգության նախագծերի կառավարման կենտրոնի հիմնադիր-տնօրեն Անի Տերտերյանն առաջարկել է ոչ ֆորմալ հանդիպումներ կազմակերպել, ինչը թույլ կտա ծանոթանալ ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդի անդամներից յուրաքանչյուրի գործունեությանը:

ՆԳ նախարարն ընդունելով ներկայացված առաջարկները՝ նշել է, որ մինչև հաջորդ նիստը հնարավոր է կազմակերպել նաև աշխատանքային քննարկումներ ՆԳՆ համակարգի ծառայողների ներգրավմամբ:

Նախարար Սարգսյանը մասնակցության համար շնորհակալություն է հայտնել Խորհրդի անդամներին՝ ընդգծելով համատեղ գործունեության և կայացված որոշումների իրագործման կարևորությունը:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ **ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**